

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 12/1

31 մարտի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանի 13.03.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.02.2015 թ-ի թիվ 47 որոշման դեմ:

Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանի գանգատում բերված փաստարկները.

համաձայն ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ 23.02.2015 թ-ի թիվ 47 որոշման 19.02.2015 թ-ի դրությամբ Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանի կողմից չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 374.100 դրամ հաստատագրված վճարի և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով, որից 2700 դրամն առաջացել է հաստատագրված վճարի 1998 թ-ի մարտ ամսվա հաշվարկով առաջացած հաստատագրված վճարի, ինչպես նաև «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերի, իսկ 371.400 գրամը՝ պարտադիր սոցիալական ապահովագրության վճարի գծով 2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հաշվարկված սոցիալական ապահովության վճարի գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելուց, որոնք ենթակա են գանձման: Գանձման ենթակա չկատարված պարտավորությունների նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվել են տույժեր և տուգանքներ:

Ուսումնասիրելով առաջադրված պարտավորությունները և դրանց առաջացման ժամանակաշրջանները Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանն ընդունում է միայն հաստատագրված վճարների գծով 1998 թ-ի մարտ ամսվա համար հաշվարկված հաստատագրված վճարի և դրա նկատմամբ հաշվարկված տույժի գումարները:

Ինչ վերաբերվում է սոցիալական ապահովագրության վճարներին և այդ գծով հաշվարկված տույժերին, որը հաշվարկվել է 2009 թ-ի հունվար ամսից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակաշրջանի համար, ապա այն անհիմն է, քանի որ համաձայն վիճակագրական պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչության պետական ռեգիստրի կողմից 06.02.1998 թ-ին տրված անհատ ծեռներեցի 01Ա թիվ 043688 վկայականի, դրա գործողության ժամկետն ավարտվում է 25.12.1999 թ-ին: Հետևաբար Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանը գործունեություն ծավալելու իրավունք չի ունեցել և չի ծավալել: Նշված օրվանից սկսած Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանն անհատ ծեռներեց չի հանդիսանում և 2009-2012 թ.թ. համար պարտավորություններ չի կարող կրել: Միաժամանակ Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանը տեղեկացնում է, որ 1999 թ-ին (ստույգ օրը չի հիշում) իր կողմից հայտարարություն է ներկայացվել Աշտարակի ՏՀՏ՝ գործունեության դադարեցման վերաբերյալ:

Հաշվի առնելով վերոգրյալը Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանը խնդրում է 371.400 դրամ սոցիալական ապահովագրության վճարների և տույժերի գումարը դուրս գրել իր ունեցած պարտավորություններից, իսկ 2700 դրամ հաստատագրված վճարի և դրա նկատմամբ հաշվարկված տույժերի գումարն իր կողմից արդեն վճարվել է:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 19.02.2015 թ-ի դրությամբ նրա չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 374.100 դրամ, որից 2700 դրամն առաջացել է հաստատագրված վճարի 1998 թ-ի մարտ ամսվա հաշվարկով, իսկ 371.400 դրամը՝ 2009 թ-ի հունվարից 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն հաշվարկված պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով գումարներն օրենքով սահմանված ժամկետներում չվճարելու հետևանքով: Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի կողմից 23.02.2015 թ-ին ընդունվել է թիվ 47 որոշումը Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանից 374.100 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ ՀՀ պետական ռեգիստրի կողմից 06.02.1998 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 043688 վկայականի համաձայն, քաղաքացի Հրաչիկ Թորոսյանը գրանցված է ՀՀ պետական ռեգիստրում որպես անհատ ձեռներեց 02.02.1998 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 043688 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 06.02.1998 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 25.12.1999 թ-ը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման 06.02.1998 թ-ի թիվ 043688 վկայականում, ինչպես նաև վկայականի թիվ 01 ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանը 25.12.1999 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, ըստ էության, դադարել են Հրաչիկ Թորոսյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանը 14.04.1998 թ-ին հարկային տեսչություն դիմում է ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին, ինչպես նաև այն, որ գործում առկա չէ որևէ ապացույց Հրաչիկ Թորոսյանի

կողմից անհատ ձեռներեցի գործունեության ժամկետն ավարտվելուց հետո գործունեություն իրականացնելու վերաբերյալ, Հանձնաժողովը եզրակացնում է, որ նրա նկատմամբ 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.02.2015 թ-ի թիվ 47 որոշմամբ հաստատագրված վճարի գծով գանձման առաջադրված 2700 դրամին, ապա այն Ա/Ձ Հրաչիկ Թորոսյանի կողմից արդեն իսկ վճարվել է:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Աշտարակի ՏՀՏ պետի 23.02.2015 թ-ի թիվ 47 որոշմամբ գանձման առաջադրված պարտավորություններից նվազեցնել սոցիալական ապահովության վճարի գծով առաջադրված պարտավորությունը՝ գումարով 371,400 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝


**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**